ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻՒ 10—12 ՀՈԿՏԵՄԲԵՐ — ԴԵԿՏԵՄԲԵՐ ԿԹ. ՏԱՐԻ 1955

ԿՑՈՒՐԴՔ

Ս. ԵՓՐԵՄԻ ԽՈՐԻՆ ԱՍՈՐԻՈՅ

ԿՑՈՒՐԴ ԼԶ.

ԱՒՐՀՆԵԱԼ ՏԷՐ, ՈՐ ԿԵՐԱԿՐԷ ԶԱՄԵՆԱՅՆ ՄԱՐԴԻԿ

Ի սակաւ հացէ լցոյց Եղիշա զմարգարէս արս հարիւրս.
եւ ի հինգ նկանակէ հազարս հինգս յագեցոյց Փրկիչն մեր.
մի նկանակն Եղիշայի զսակաւս բաւեաց կեցուցանել.
եւ մի նկանակն Տեառն մերոյ հազար մի ողջ յագեցոյց:
Մարգարէք կատեկաւ կերակրեցան եւ մոլաթզով կեցին նոքա.
եւ զի լիութեամբ սեղան մեր. աւրհնութիւն լրիւ իւրով հանցուք.
մարգարէիցն ամենայն տառապանք.
եւ մեզ ամենայն խրախութիւնք.
զի նոքա զտառապանաց զոհանային, քանի՛ եւս զոհասցուք մեք
որ զրգանամքս:
Մուրկ եւ մարգարէիցն եւ առաքելոցն զնոյն.
իսկ մեզ առաւել է կերակուր մեր.
քաղցեալ հացի էին առաքեալքն. եւ մարգարէքն ծարաւի ջրոյ.
խորտիկ եւ գինի չեղջեալ են մեզ. զոհասցուք վասն երկոցունց:
Առաքեալքն գրիչք Տեառն ի տառապանս իւրեանց զոհանային,
իսկ մեզ եթէ ինչ պակասեաց՝ ծնանի քրթմնջիւն ի բերանս մեր.
հալածական առնէին զդեւս ի մարդոյ.
եւ նոքա յարտաւրեացն հասկ փխրէին.
առ հիւանդս առաքինութիւնք նոցա.
եւ ի վայրի տառապանք իւրեանց.
ամենահաստիչն ընդ աշակերտսն իւր,
եւ նոքա աւրապահին կարաւտեալք էին.
ի խաչահանուսն բնակեալ էր լիութիւն.
եւ յաշակերտսն քաղցութիւն.
եւ զաւրութիւն աշակերտացն հալածել զդեւս ի մարդկանէ.
ընդարձակեաց զառողջութիւն նոցա
եւ նուազեցոյց զխորտիկս նոցա.

ՄԻՀՐԴԱՏ ԹԻՐԵԱՔԵԱՆ

Լզ. B 43—44: D 88—91: E 73ա:
1 DE եղիշայ: — 2 D հինգ: — 13 ծարաւիք: — 18 D յարտաւրեայն:

© National Library of Armenia

փչեաց Հոգի յերեսս նոցա, զի խաւսեսցին յամենայն լեզուս ·
եւ ի ձեռն մարմնոյ չրթանց փչեցին զմուրկն եւ կերին ·
Հաց պատարագի կերան խաչահանուքն ·
 եւ առաքեալքն եւ ոչ Համարձակ ·
Հաց յանկութեան խաչահանուացն
 եւ աշակերտացն Հաց զարւոյ ·
մարգարէքն յաւուրս Եղիայի Հաց կերան կշռով ·
եւ զի ընդարձակ է մեզ ամենայն ինչ,
 չափով կերիցուք զհամադամս նոցա ·
Ջուր ճշդիւ ըմպէին մարգարէքն ·
 զորս կերակրեաց Աբդիա ·
իսկ մեզ զի յաճախեաց գինիս,
 մի լիցուք արտաքոյ պայմանի ·
մի դատեսցէ զքեզ եղբայր որ ընդ քեզ է,
 եւ մի դու դատեսցես զանձն քո ·
եղիցի չափով ըմպելի քո եւ կշռով կերակուր քո ·
զխորտիկ եթէ անարգեսցես փոքր մի,
 բնակեսցէ անձն քո ի պարարտութեան ·
եւ ի գինւոյ եթէ աւտարասցիս,
 Հոգի քո առաւել եւս սրբեսցի ·
զոյն ցածուն պահողաց խորտկաւք մի փոխեսցին ·
եւ գինւով մի մխիթարեսցի սիրտ
 որ վշտացեալ է յաղաւթս ·
զի ում որիչ է Հանապազ, մեք զոնէ որոչեսցուք զայս աւր ·
եւ զի եղբայր քո բնաւ ոչ ճաշակէ,
 դու զէ՛թ կշռով կե՛ր զամենայն ։

ԿՑՈՒՐԴ ԼԵ.

ԱՒՐՀՆԵԱԼ Է ՏԷՐ, ՈՐ ԿԵՐԱԿՐԷ ՇՆՈՐՀԻՒ ԻՒՐՈՎ ԶՀԱՒԱՏԱՑԵԱԼՍ

Եկին զուարթունքն առ Աբրահամ ի մաւտոյ
 եւ ոչ ի Հեռուստ ·
ի մաւտոյ . . . .
. . . . թեամբ ·
Աւրէնք բնութեան Աբրահամու ոչ եթէ քանի՛ Հաւատացեալ էր,
այլ եթէ քանի՛ սիրէ զաղքատս ծառայակիցս իւր ։
Իբրեւ քննեաց զհաւատս նորա եւ ետ խոստումն սիրոյ նորա,
թէ ի միւսանգամ Սահակաւ ընկալցի զհատուցումն երկոցունց ·

30 E խաչահանունքն ։ — 38 E արդիոյ ։ — 41 D դատեսցի ։ — 46 E գինոյ ։ — 49 DE գինով ։

ԼԵ. B 45—46 ։ D 91—93 ։ E 73բ—74բ ։
1 D «Աբրահամ . . . ի մաւտոյ» — 3—4 B ընդ մէջ 43—44 թղթերու թուղթ մը ինկած ։

1739-41

ոչ եթէ ամենեւին Հատոյց նմա, զի Հատուցումն զոր Հատոյց
 որդւով նորա,
նմանութիւն էր եւ նշմարանք Հատուցմանն ճշմարտութեան ·
ոչ էր վաստակ ի մարմինս նոցա,
 եւ ոչ աշխատութիւն յանդամս նոցա ·
ոչ քուն յերեսս նոցա եւ ոչ փոշի յոտս նոցա ։
Ո՞ ոք ժպրհեսցի ասել, թէ ի զուարթունս տիրեցին այսոքիկ,
որք յական թաւթափել իջին յերկիր ի բարձանց ·
իջանէ փայլակն եւ դառնայ
 իբրեւ յոյժ տկար է նա քան զզուարթունս ·
ոչ տիրէ նմա աշխատութիւն եւ ոչ կռւի ի նմա փոշի ։
Ջնստաւ սիրտ նոցա · ոչ զի քաղցեալ էին,
 այլ վասն Հանգստեանն Աբրահամու ·
ետուն զոտս իւրեանց ի լուացումն, զի առաւել լիցի
 վարձն ընդ այնորիկ,
փոխանակ զի լուաց զոտս զուարթնոց,
 անցին ընդ ծով ոտք զաւակի իւրոյ ·
եւ զի ջնջեաց զոտս նոցա դաստառակաւ՝
 զգեցան զհանդերձս Եգիպտոսի ։
Սփռեաց ամպ ի վերայ ծննդոց նորա
 փոխանակ Հովանւոյ կաղնւոյն ·
եւ զի արկ անկողին ի ներքոյ նոցա,
 ետ զաւակի նոցա զպաստառակս Եգիպտոսի ·
ամենահատուցիչն Հատոյց Աբրահամու ոչ միայն որչափ արար նա ·
 զի զորդիս նորա զգեցոյց նա ·
 եւ ոչ մաշեցան Հանդերձք նոցա ։
Հատոյց մանանայ փոխանակ բաղարջին,
 եւ լորամարգ փոխանակ որթուն ·
եւ զի կերակրեաց զզուարթունս Հլուս ·
 Հատոյց զլացող որդւոց նորա ·
եհերձ դարձեալ զվէմ եւ ետ գետս տասնեւերկուս,
զի արբուսցէ զանթիւ ազգն ·
 փոխանակ ջրոյն զոր ետ երիցն ։
Ընթերցարուք, քանզի Հատուցանէ Տէր մեր
 առնելեաց զուրս ողորմութեան
ի կեանս եւ ի մահս իւրեանց եւ ծննդոց,
 որ զան զկնի նոցա ·
ակնարկեաց եւ աճեցոյց զամլութիւն եւ բազմացոյց Սահակաւ
զզաւակս նորա իբրեւ զաւազ ծովու որ առանց թուոյ ։

9 զհատուցումն] D զխոստումն ։ — 26 D եւ չեւ ջ. ։ — 37 ED զուարթունս ։ — 38 E զլացաւղ ։ —

© National Library of Armenia

Աւրհնեալ որ հատոյց Աբրահամու յառաջ քան զմահ
եւ յետ մահու նորա.
50 Իբրեւ կայ եւս հատուցումն իւր եւ զկնի յարութեան իւրոյ.
աւրհնութիւն Որդւոյ,
որ զամենայն ինչ հատուցանէ արդարոց իւրոց։

ԿՅՈՒՐԴ ԼԸ.

ԱՒՐՀՆԵԱԼ ՈՐ ԿԵՐԱԿՐԷ ԶԱՄԵՆԱՅՆ ՇՈՒՆՉ ԻԲՐԵՒ ԶՀԱԶԱՐՍՆ ՅԱՆԱՊԱՏԻՆ

Ժողովեցան յամենայն ազգաց յանապատն
առ Փրկիչն մեր.
Էին ի նոսա ախտաժէտք եւ հարածք
եւ կոյրք եւ խուլք եւ բորոտք.
5 յաւուրն առաջնում ակն ունէին,
թէ ի նմա բժշկէ զցաւս նոցա։
Ա՛նց պարզեցաւ աւրն առաջին.
եւ կայր ժողովուրդն յարատս իւր.
յաւուրն երկրորդի ակն ունէին,
10 թէ ի նմա բժշկէ եւ արձակէ զնոսա.
կատարեցաւ աւրն երկրորդ եւ ոչ արձակեաց,
զի չէին բժշկեալք։
Ժուժեցին կոյրքն եւ բորոտքն եւ որ ունէին զդեւս,
եւ կացին մնացին.
15 եւ իբրեւ փակեալ էր ընդդէմ ամենեցուն,
ոչ ոք փոխեցաւ առ ի նմանէ.
զի թէ բժշկեալ էր զսակաւս,
արդեւլուի՞ն սակաւքն զբազումսն։
Եւթնիցս յաւուր մերձեցան առ նա ցաւածքն
20 եւ ոչ բժշկեաց զնոսա.
յաւուրն առաջնում եւ երկրորդի
սերմանեաց ի նոսա վարդապետութիւն.
զի իբրեւ բժշկեաց զմիոս նոցա,
ողջացուսցէ եւ զմարմինս նոցա։
25 Եւ աւրէն իսկ էր, զի յառաջագոյն տայցէ
զմեծ բժշկութիւնն,
զի մեծ է հոգի քան զմարմին,
ի բժշկութենէ ոգւոց վաստակաց.

51 արդարոց] D որդւոց։
Լ.Ը. B 47—48: D 94—98: E 74բ—76ա։
Խորագիր՝ D իբր։
3 D հատածք։ — 12 D զդեւսն։ — 27 D բժշկութեան. E ոգոց։

պաշար որ եկն ընդ մարդկանն՝
սպառեցաւ յաւուրսն երկուս։
30 Կրկնեցաւ վիշտ ի սպառել հացին,
եւ կային տակաւին արատք նոցա.
երկունք մահու կալաւ զնոսա,
եթէ մնայցեն ո՛չ բժշկին.
եւ զառնալ յաւթեանս իւրեանց
35 չզոյր զաւրութիւն յոտս նոցա։
Տեւեցին յաւրն երրորդ յայս ապաստան,
թէ բժշկին.
անցին ժամք մեռասան եւ զոք ի նոցանէ
ոչ բժշկեաց.
40 ունէին կանայք զսիրելիս իւրեանց,
եւ զանդամալոյծս հանդերձ կաղիւք։
Մի կին տանէր զեղբայր իւր դաւս,
եւ միւսն ձգէր զհայր իւր կոյր.
արեգակն ի մտանել մերձեալ էր,
եւ կացին ամենեքեան յաչտիճան մահու.
45 կրկնեցաւ վիշտ հիւանդաց նոցա
եւ յողդողդեաց սով զառողջսն նոցա։
Յամփոփել արեգական զճառագայթս իւր՝
վա՜յ-կոչէին անձանց իւրեանց.
50 զի հիւանդքն ի ցաւս կաշկանդեալ էին
եւ առողջքն քաղցիւ կապեալ էին.
ի ժողովել արեգական զծայրս իւր,
ծագեցին նոցա ողորմութիւնք։
Զի եւ զբժշկութիւն զոր խնդրեցին,
55 հանդերձ յաղմամբն զոր ոչ խնդրեցին.
յետ առնլոյ զհանդէս նոցա
զճշմարտիցն այն եւ զկեղծաւորաց,
սփռեաց զգութ իւր զամենայնիւ՝
զզրկեցողաւքն եւ զհատուցանողաւքն։
Յաշակերտացն ուսանէր որ ինչ յայտ է խորհրդոց նորա.
60 վկայս կամեցաւ առնել զնոսա հացին
որ պակասեաց ի ժողովրդենէն,
տէր որ գիտէր թէ զո՛ր սքանչելիս հանդերձեալ էր կատարել։
Անդ ակնարկել նորա յաճախեաց զհայն.
ոչ հրամայեաց մնալ առաջնոյն, այլ ֆած զկնի եւ զայլսն։
65 Լոյսն մեր եհարց զառաքեալսն թէ քանի՞ նկանակս ունիք առ ձեզ.
զի յայտնեսցէ թէ պակասեաց հաց յաղքատաց եւ ի մեծատանց։

44 D կային։ — 46 D յողդողդեաց. D զառողջս։ — 55 D զճշմարտից։ — 58 E զի զզրկեցողաւքն եւ հ. D զի զրկեցողօքն եւ հ.։ — 59 D յայտ էր։
63 D ակնարկեալ։ — 64 D ած։ —

© National Library of Armenia

Զլիութի՞ւնն եւ նախ արդեւք,
եթէ զառողջութիւնն յառաջ քան զլիութիւնն.
զբժշկութի՞ւնն եւ յառաջագոյն,
եթէ ուրախ արար նախ զհիւանդս ի յագմանն:
Բազմեցան յանկարծակի ի վերայ խոտոյ
քահանայք սուրբք ընդ բորոտսն,
որք ի նմին ժամու առին զսրբութիւն:
Բացեալ էին աչք կուրաց եւ հայէին ի ծաղիկս եւ ի խոտս.
ողջք ընդ կոյրս պշուցեալք էին եւ նոքա ընդ զեղ արարածոցս.
նստէր անդրանիկ առ մաւր իւրում անդամալոյծ.
իբրեւ ճեպեալ էր ընուլ զորովայնն
եւ ցուցանել զընթացս ոտից իւրոց զոր ստացաւ:
Յարեան եւ մեկնեցան ի Տեառնէ ժողովք ժողովք
ի քաղաքս իւրեանց.
եւ որք պէսպէս ցաւաւք եկին առ նա,
մեկնեցան ի նմանէ առողջութեամբ.
մեծ զարմանք եղեն անդ, զի մի՛ յագումն Եւ ամենեցուն.
եւ պաշար ամենայնի եւ առողջութիւն ամենեցունց:
Եթող կոյր զառաջնորդ իւր
եւ անդամալոյծ զայն որ կրէր զնա.
կաղք ընկեցին զցուպս իւրեանց յառողջութեան
զոր ստացան ոտք նոցա:
Աւրհնութիւն այնմ որ յագեցոյց եւ բժշկեաց
զժողովն յանապատի.
զի ըստ նմին աւրինակի բժշկէ եւ կերակրէ
զամենայն մարդիկ որ ընդ տիեզերս:

ԿՑՈՒՐԴ ԼԹ.

ԱՒՐՀՆԵԱԼ ՈՐ ԿԵՐԱԿՐԷ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԻՒՐՈՎ ԶԱՇԽԱՐՀՍ ԶՈՐ ՀԱՍՏԱՏԵԱՑ ԳԹՈՒԹԵԱՄԲ

Ցաւուր յորում կենդանացաւ տէր մեր Քրիստոս
եւ լուծաւ դողումն աշակերտացն,
ասէ Շմաւոն ցառաքեալսն, եթէ Երթայց որսացիս ձուկն.
յարեան ընկերքն, գնացին ընդ նմա իբրեւ յոս եւ ի զբաւսանս.
զի սթափեսցին ի տրամութենէ եւ բերցեն զաւրապիհ աւուրն:

74 D պշուցեալ:
Լթ. B 50ա—53բ: D 98—102: E 76ա: F Եփրեմ, Դ. 61, ա. 1—8:
3 D յառաքեալսն: — 5 E թափեսցի D թափեսցին F սթափեսցին B զաւապիհ. FD զօրապահի. E (Պետրոսեան սրբագրած) զաւրապահ. Հ. Ա. Վասդանեան (Բառաքննական դիտողութիւններ, Գ. 30—31. հմմտ. Ամառեան, Արմատ. Բառարան, Ե. 1050) ուղղած է զաւրապիհ:

Զգիշերն ամենայն աշխատեցան. եւ յուռկանն ոչ եմուտ ձուկն.
զի տրամեցոյց զնոսա ծովն՝ տէր ծովուն ուրախ արար զնոսա.
ի ժամուն իբրեւ խափանեցաւ որսն՝ պատահեաց նոցա որս յոյժ,
իբրեւ լքան ձեռք նոցա՝ զտին նոքա որս եւ զՈրդի:
Եւ թէ մինչ ընդ նոսայն էր բժիշկն մեր եւ բժշկէր զամենայն ցաւս,
կարաւտեալք էին ի հաց եւ հասկ ի քաղցի փխրեցին եւ կերան.
այսաւր զի՞ որդ ոչ, որք միայն մնացին ի նմանէ
եւ ի զաւրութեանց նորա.
զի մինչ ընդ նոսայն էր քաղցնուին,
զի առանց նորա:
Քանի՞ եւս քաղցնուն առանց նորա:
Զի առանց որսոյ եւ առանց հացի էին նոքա յայնմ աւուր,
եւ եւ տէր մեր զերկոսին կարաւտելոցն յերկոցունց.
եւ յաւել տէրն երկոցունց զառաւելն քան զերկոսին,
զի զՈրդին Տեառն ամենայնի զտին անդ:
Նմանեցոյց զանձն դոյզն ումեք, զի խնդրեսցէ զհաց ի քաղցելոցն.
Ուտել ինչ, ասէ կերակրիչն ամենայնի.
եւ զի յայսմանէ ոչ ծանեան զնա, եւ եւես զնոսա զի տրամեալ էին,
եւ ասէ թէ Ցաջմէ նաւիդ ընկեցէք եւ ահա գտանէք:
Ընկեցին զուռկանն եւ զտին որս յոյժ.
ընդ որսոյն խորհել սկսան թէ ո՞վ է այն, որ իբրեւ ի ցամաքի է,
եւես զձկունս ի մէջ ծովուն ժողովեալ.
զի ժողովէին ընդ աջմէ նաւին:
Եթէ եւես զնոսա, զարմացումն է,
եւ եթէ նա ժողովեաց զնոսա, ո՞վ է նա, որում լուան ձկունքն.
կարծել թէ Որդին իցէ՝ ոչ նմանէր բարբառով եւ ոչ տեսլեամբ.
եւ եթէ չէ նա, ո՞վ իցէ,
զի ընդ բանին նորա եղեն արդիւնքն:
Ծանեաւ զնա Յովհաննէս եւ ասէ ցՇմաւոն, թէ Տէր է այն.
Ծանեաւ զնա Յովհաննէս եւ ասէ ցՇմաւոն, թէ Տէր է այն.
ձգեցին զգործն լցեալ, եւ այսր եւ անդր հայէին յորս ծովուն.
հայեցան յՈրդի ի ցամաքն. եւ դոյզն ինչ էր
ուրախութիւն ձկանցն որ ի Փրկիչն մեր.
զի բազմացաւ որս քաղցելոցն. եւ չէ մարթ թէ պատմեսցի
ուրախութիւն նոցա որ ի Փրկիչն մեր:
Ոչ կալաւ զոյժ Շմաւոն մինչեւ ձգիցէ զուռկանն ի ցամաք.
լաւդայր զայր եւ ածէր զմտաւ. նա՞ արդեւք իցէ, թէ ոչ իցէ նա,
ոչ ասաց, թէ Դու ես, տէր, հրամայեա ինձ գալ առ քեզ.
զի երկեաւ նա, թէ գուցէ փորձութիւն պատահեսցէ նմա
իբրեւ զառաջինն.
կտաւ ած ընդ մէջ զգեստ մինչ ի ջուր անդր էր:

8 D ժամու. F պատրաստեցաւ փոխ. պատահեաց: Հոս կ'աւարտի F: — 26 D ձկունս:
— 28 D չունի է: — 30 D նման էր: — 40 E իցէ նոյ:

© National Library of Armenia

Եւ իբրեւ եւ նա զի՞րդ արդեւք մերձեցաւ առ տէր իւր.
երկեւղի՞ւ մեծաւ իբրեւ զԱմլորդին,
  թէ միամտութեամբ որպէս Մարիամ.
ի բերա՞ն եւ արդեւք ողջոյն,
  եթէ առ ոտսն անկաւ եւ եպագ երկիր.
ասա՞ց ինչ արդեւք յայնժամ Շմաւոն,
  թէ լռութիւն պատահեաց ի ժամուն:
Աղաչեա՞ց վասն ուրանալոյն զնա, թէ չէր ժամ աղաչելոյ զնա.
եհա՞րց զնա Շմաւոն, զի պատմեսցէ վասն մահուն
  եւ յարութեան իւրոյ,
թէ ղողումն կալաւ զնա իբրեւ ետես ոչ ի կերպարանս իւր:
Ելին աշակերտքն եւ տեսին հաց
  եւ կայծակունս եւ ձուկն ի վերայ նորա.
զարմացան ընդ չորս նշանսն զորս եցոյց նոցա ի միում ժամու,
եթէ նշան ծովուն ղուգնաքեայ էր,
  զի ժողովելով ժողովեաց զձուկնն,
ցամաքին մեծ էր զի հաստատեաց
  զհացն եւ զձուկնն եւ զկայծակունսն:
Ի ծովէ՞ անտի էր ձուկն այն, եթէ մեծ ծովու էր արդեւք.
հաց յաշխարհէ՞ս էր, թէ հաց նոր էր.
ձո՞ւկն էր արդեւք զոր ծնաւ ցամաք, եւ հաց զոր բղխեաց աւդ.
կամ թէ չէին յայսցանէ, զի յոչընչէ էին նոքա:
Այն որ բազմացոյց հաց ժողովրդեանն,
  նա հաստատեաց աշակերտացն.
ուրհնեաց զձկունսն յանապատին,
  հաստատեաց հուր ի ծովեզերին.
եւ զի ոչ հաւատացին անուսմունքն,
  թէ հաստատեալ է հուր յամենայն իմիք,
եկեսցեն տեսցեն զի հաստատեալ է ընդ փայտի
  ի Փրկչէն մերմէ:

ԿՑՈՒՐԴ Խ.

ԱՒՐՀՆԵԱԼ ՈՐ ԵԿԵՐ ԸՆԴ ԱՇԱԿԵՐՏՍՆ, ԶԻ ՑՈՒՑՑԷ ԹԷ ՄԱՐՄԻՆ ԶԳԵՑԱՒ

Զի ետես տէր զաշակերտսն իւր,
  թէ աշխատեալք եւ քաղցեալք են,
պատրաստեաց տէրն ծառայից իւրոց
  ճաշ մինչչեւ եկեալ նոցա.

49 D եթէ: — 53 D շմաւոնն: — 63 E արդեւաւք. D արդեօք: — 65 E չունի արդեւք
D արդեօք:

Խ. B 53բ—54բ: D 103—107: F 77բ—78բ: F Եփրեմ Ձ. 61 ...
2 FD էին:

ելին զտին առաջի նորա հաց եւ ձուկն
  արկեալ զկայծակամբք.
ասէ ցնոսա. Եկայք ճաշեցէք, զի աւր է պենտակոստէից:
Այսր անդր ելին միտք նոցա, թէ ուստի՞ է հացս այս եւ ձուկնս.
զի յանապատին աճելով աճեաց.
  եւ աստ հաստատելով հաստատեցաւ.
զի յանապատի անդ յընչէ եղեն.
  եւ աստ յոչնչէ հաստատեցան.
զի յաճախեցուցանել տեսին զնա, ոչ տեսին իբրեւ հաստէրն:
Ի ձկանէդ, զոր որսացայք, խորովեցէք
  ասաց տէր ցաշակերտսն իւր.
ոչ նոքա որսացան զձուկնն,
  այլ դու հրամայեցեր որսալ զնոսա.
նոցա էր թերեւս եթէ ըմբռնեալ էր յայնմ գիշերի,
  յորում ոչինչ գտին.
եւ զի յետ բանի քո ըմբռնեցին,
  յարութիւն քո հաւատացաւ նովաւ:
Ընդէ՞ր ընդ միոյ ձկանն ոչ հաստատեաց ձկունս բազումս.
զի հանդերձեալ էր նա տալ զորսն՝
  ոչ յաճախեաց հաստատել ձկունս յոյժ.
մի ձկամբն զոր հաստատեաց՝ եցոյց զհաստատութիւն իւր.
եւ զարձեալ զի ոչն յաճախեաց հաստատեաց,
  եցոյց զկանխութիւն գիտութեան իւրոյ:
Զի գիտէր թէ երկնչին ի նմանէ
  վասն այլանման կերպարանաց իւրոց,
ոչ յաճախեաց հաստեաց, զի գուցէ
  զարհուրեցուսցէ զնոսա հաստատութիւն իւր.
իբրեւ հերձին եւ լուացին եւ խորովեցին,
  հաղորդեցին ընդ նմա հացիւն.
զի հատոյց նոցա մինչչեւ եկեալ էին,
  հատուցին նոքա յետ գալոյն:
Զոր ինչ խոստացաւ նա ի վախճանի
  առնել երկոտասանիցն,
կանխեաց արար նա զայն աստ,
  զի այս ընդ այնր երաշխաւորեսցի.
զի խոստացաւ նա ուտել ընդ իւր
  առ սեղան արքայութեան,
եւ զոր չէր խոստացեալ արար,
  զի առաւել ստուգեսցի խոստացեալն:

7 Ելին] DF եղեն: — 10 F հաստելով հաստեցաւ: — 14 DEF որ: — 21, 33 F
հաղորդեցան: — 39 D զի այն. ED ընդ այն F ընդ այնր: — 40 D
— 33 F ...

© National Library of Armenia

Եկայք ճաշեցէք, ասէր Աստուած ցձկնորսսն.
    բազմէին քաղցեալքն.
եւ ի մէջ նոցա կերակրիչն քաղցելոց բազմեալ էր.
սրբէք զարհուրէին ի նմանէ.
    եւ գունդք գաբրիէլեան սոսկացեալ
եւ որդիք հողոյ բազմեալ ընդ նմա
    նախ քան զաւրն զի բազմին ընդ նմա:
Թէ հարցանիցեն վասն հացին եւ վասն հրոյն եւ վասն ձկանն,
գիտէին թէ որ բռնադատեաց զձկունսն
    որ ցրուեալ էին ի մէջ ծովուն,
զի ժողովեսցի բազմութիւնն ի մէջ փոքր գոգոյ ուռկանին,
Նա հրամայեաց հացի եւ հրոյ եւ ձկանն, եւ եղեն յանկարծ:
Զի եցոյց նոցա եւ զհաստչութիւնն իւր որսալովն զոր ետ նոցա.
զի հուրն եւ հացն եւ ձուկն ահա վկայեն երեքկին
    զԵրրորդութեան աստուածութենէն.
ուտէին ընդ նմա եւ հայէին, եթէ ուտէ կամ չուտէ.
եթէ կարաւտ էր նա հացի, ո՞չ կարէր նա հաստել հաց:
Եկեր ընդ նոսա, զի գուշակեսցէ,
    թէ արդարեւ մարմին զգեցաւ.
եցոյց նոցա զսպիսն, զի ծանուսցէ,
    թէ նոյն ինքն կենդանացաւ.
եւ թէ իբրեւ զպյսոսիկ արար,
    կամեցան ստել զյարութիւն նորա.
եթէ անփոյթ արարեալ էր, քանի՞ եւս սուտ առնէին:
Ծրջեալ զհացն եւ զձուկն առաջի նոցա, եւ ոչ հաստեաց ջուրս.
զի գիտէր, զի որ ոք ծարաւէր,
    երթայր ըմպէր ի ծովն եւ գայր բազմէր.
եւ ոչ գինի հաստեաց՝ իբրեւ կարէր,
    զի ուսուսցէ մեզ աշակերտելոցս,
զի եթէ պիտոյ ինչ էր գինի, տայր զնա առաքելոցն:
Նաեւ ասաց իսկ եթէ Ոչ արբից միւսանգամ ի ծննդենէ որթոյ.
զարմանք են այս եւ յոյժ ժպրհեցի
    պատմել զմանէ յայտնապէս.
զի հաստեաց գինի ի հանդիսա մեր,
    եւ մի ցասուսցուք նովաւ զԱստուած.
արբցուք չափով գինի, զոր ճաշակեցին եղբարք մեր.

56 E կ'աւարտի նոցա եւ զհաստչու ||| յայտարարելով թէ Bէն 4 թուղթ ինկած է ընդ մէջ 54/55 թղթերու. D նոցա զԱստուածութիւն իւր որսովն այն || : Զի հուրն... F (էջ 62) լրացուցած եմ առնելով Fէն: — 58 F (ձեռագիրը) աստուածութեանն: — 69 FD գիտէին: — 56—81 տողերը — 78 F (ձեռ.) ցասցուք:

զի է՝ որ ոչ ճաշակեաց զնա, եւ է՝ որ սակաւ.
զի գուցէ լկտեցուսցէ զաւելի ըմպողսն:

ԿՑՈՒՐԴ ԽԱ.

. . . . դիպեսցի մեզ:
. . . . տկարութեանս մերում,
Գոհութիւն այնմ որ աւգնեսցէ
եւ ոչ տայ վատել զի մի տրտնջեսցուք:

81 Կ'աւարտի Եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն: ԽԱ. B 55ա: D 107: E 78բ:

1 Ունինք միայն հետեւեալ տողերը. որոնք կցուրդիս աւարտը կը կազմեն: D անտեսելով դիպեսցի մեզ, 2—3 տողերը կցած է Խ կցուրդին իբրեւ վերջաբան:

Հրտ. Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ԳՐԻԳՈՐԻՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՂԹԱՄԱՐՑԻ

(Շարունակութիւն)

2. ԱՂԹԱՄԱՐՑԻՈՑ ՏԱՂԱՐԱՆԸ

ՁԵՌԱԳԻՐՔ

Տարիներ յառաջ, 1914ին ձեռնարկած էի հրատարակել Գրիգորիս Աղթամարցւոյ հաւաքած տաղերը համեմատութեամբ ինձ մատչելի ձեռագիրներու եւ տպագիրներու: Ա.—ԻԱ. տաղերը տպագրուած էին, երբ ծագեցաւ առաջին համաշխարհական պատերազմը: Ստիպած էր ժամանակը ընդհատել տպագրութիւնը: Այլ եւ այլ պատճառներ հրապարակ չթոյլատրեցին մինչեւ այսօր հրապարակ հանել զայն: Այս տեղ հակիրճ նկարագրութեամբ պիտի ներկայացնեմ Վիեննայի Մխիթարեան Մատենադարանի այն ձեռագիրները, որոնց հիման վրայ պատրաստուած էին յիշեալ տպագրութեան բնագիրները:

1. Թ. 684 (A): Ձեռագիրս, գրուած իրր ԺԶ. դարու երկրորդ կէսին, հաւանօրէն Զաքարիա Գնունեցւոյ գրչէն, կ'ամփոփէ Աղթամարցւոյ տաղերը, ինչպէս նաեւ իր ծոցը հաւաքածոյք մը Աղթամարցւոյ տաղերուն, թուով », ԺԵ եւ ԺԷ թերթ, թուղթ Ձեռագրին մէջ պատճառով: Ասոնք են թեր ինկած ըլլալու պատճառով: Ասոնք են Ա, Գ—Ը, ԺԱ, ԺԳ—ԺԵ, ԺԷ—ԻԲ: Ձեռագրիս նկարագրութիւնը տես Զաքարիա եպիսկոպոս Գնունեաց եւ իր տաղերը, էջ 21—23:

2. Թ. 344 (B): Ընտիր Տաղարան մը, գրուած ԺԶ. դարու վերջին քառորդին Մինաս Թոխաթցիէ. Նկարագրութիւնը Տաշեան, Ցուցակ, էջ 793—797: Աղթամարցւոյ տաղերէն կան հոս՝ Գ—Է, ԺԲ, ԺԳ, ԺԷ, ԺԹ—ԻԲ:

3. Թ. 663 (C): Հաւանօրէն ԺԷ. դարէն. Նկարագրութիւնը՝ Զաքարիա եպ. Գնունեաց, էջ 23: Ունինք հոս՝ Ե, Զ, Ժ, ԺԳ, ԺԷ—ԻԲ:

4. Թ. 797 (Γ): Տաղարան, օրինակուած Կերլայի Թ. 43 ձեռագրէն 1909ին, գրուած 1604—1626 տարիներուն Յակոբ երէցէն եւ իր որդւոյն՝ Աստուածատուր գրչէն: Ունի Բ, Դ, ԺԳ, ԺԶ—ԺԹ տաղերը:

5. Թ. 976 (E[1]): Տաղարան, գրուած 1614—1623 տարիներուն: Կան հոս Գ, Ի, ԻԱ եւ ԻԲ տաղերը:

6. Թ. 1042 Հ. Աճառեանի կազմած Տաղարանը, օրինակուած Էջմիածնի եւ Թաւրիզի ձեռագիր Տաղարաններէ, նուէր մեր Մատենադարանին, ստացուած 1932ին:

7. Թ. 69 (O). Ժողովածոյք 1662էն (հմմտ. Տաշեան, անդ, էջ 310—313: Ասկէ է Բ. տաղը:

8. Թ. 156 (P): Տաղարան գրուած 1758ին (հմմտ. Տաշեան, անդ, 461): Ե. տաղը:

9. Թ. 263 (L). Հաւաքածոյ, գրուած 1705—1714ին (հմմտ. Տաշեան, անդ, 669—678): Թ. եւ Ժ. տաղերը:

10. Թ. 343 (G): Տաղարան իրր 1671էն.

© National Library of Armenia